

ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱԽՑ ԿՈԼ-ՏԵՏ. ԿԵՆՏՐՈՆԻ № 8

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ  
ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

---

---

338.14

գ - 68

ՅԵՐԵՎԱՆ - 1928 թ.

17 FEB 2010

338-14.

4-68

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ  
ԳՅՈՒՂ ԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

I. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՂԵԿԱՎԱՐԵԼՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐԵԼԸ

Արտելի Խորհուրդը կատարում է իր աշխատանք-  
ները կանոնադրության, բնդկանուր ժողովի և այս  
ներքին կոնսոների հիման վրա. այս կանոնները չեն փո-  
խարինում կանոնադրությունը, այլ պարզաբանում և  
զարգացնում են նրա հոգվածները:

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՅԵԿ ՊԱՇՏՈՆՑԱՆՆԵՐԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Խորհրդի նախագահը Արտելի տնտեսության  
ընդհանուր ղեկավարն է և բոլոր աշխատանքները հա-  
մաձայնեցնում են տնտեսա-արտադրական պլանի պա-  
հանջների հետ: Նա յե անում բոլոր ղեկավարող կար-  
գադրությունները և հետեւում բոլոր աշխատանքնե-  
րին և նրանց իրագործմանը:

2. Նախագահին ոգնելու համար, նայած պահան-  
ջին, նշանակվում են Արտելի տնտեսության առանձին  
ճյուղերի համար հատուկ ղեկավարներ ինչպես Խոր-  
հրդի անդամներից, նույնպես և Արտելի մյուս ան-  
դամներից կամ թե դրանց հատկապես մարդիկ են հրա-  
գիրվում ժամանակավոր կամ մշտապես աշխատելու  
պայմանով:

3. Տնտեսության առանձին ճյուղերի ղեկավարները  
պատասխանատու յեն իրենց աշխատանքի համար Ար-  
տելի նախագահի առաջ և պարտավոր են կատարել  
նրա ցուցմունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՖԻ Ի ՏՊԱՐԱՆ  
ՊԱՏՎԵՐ 4090  
ԳՐԱՓԵԼ. 860 Բ. ՏԵՐԱԶ 2000

8  
74  
35  
23  
10  
8

20.03.2013

30/450

4. Այն բոլոր անձինք, վորոնք զեկավարում են տնտեսության հատուկ ճյուղերը (այդեզործություն, անասնապահություն, բանջարաբուծություն, ցանք և այլն) պատասխանատու յեն գործերի ուղղղ կառարժան համար և պարտավոր են ժամանակին նիշտ հաշիվ և տեղեկանք տալ Արտելի Խորհրդին:

5. Տնտեսության գորեւ ճյուղի զեկավարի անուշաղից վերաբերմունքի հետեւանքով Արտելի տնտեսությանը հասած վնասի զեղքում զեկավարը, համաձայն Արտելում սահմանված կանոնների, հեռացվում և իր պարտականություններից և կրում և նյութական պատասխանատվություն:

6. Արտելի Խորհրդի քարտուղարը զեկավարում և Արտելի գործունեյությունն ու գրադրությունները և կազմում և Խորհրդի նիստերի արձանագրությունները:

7. Գանձապահը, վոր Արտելի Խորհրդի անդամներից մեկն և, զեկավարում և բոլոր գրամական գումարները, ընդունում և պահում և ամեն տեսակ արժեքներ, ժուծումները և վճարումները, նույնպես և կատարում են, Արտելի Խորհրդի նախապահի կամ նրա տեղակալի գրավոր թույլտվությամբ, Արտելի տնտեսական ծախշերի վերաբերյալ վճարումները:

Գանձապահը վոչ մի գեղքում իրավունք չունի գրամ վճարել վորեւ մեկին առանց ստացականի:

Դրամական մուծումների և հանձնումների հաշվառման համար գանձապահը պահում և մուտքի և յեւքի անդորրապիրք և որագիրք (գրամարկղի սեագրության գիրք). գրամական ամեն մի հանձման համար զրվում և անդորրապիր, վորի արմատի վրա ստորագրում և ստացողը:

Անդորրապիրի արմատը, վորեւ գրված և հանձնված գումարը, գանձապահը տալիս և հաշվետարին

անցկացնելու գրամարկղի գրքի մեջ: Յեթե գրամարկղում պակասում ե դրամ, այդ պակասը գրվում ե գանձապահի վրա վորպես պարտք: Դրա հետ միաժամանակ Վերստուղիչ Հանձնաժողովը միջոցներ և ձեռք առնում պակասի պատճառները պարզելու և, յեթե պարզի, վոր գանձապահը ծախսել է, Արտելի Խորհրդը միջոցներ և ձեռք առնում, վոր գանձապահը լրացնե այդ պակաս գումարը:

Բոլոր դրամական արդարացնող փաստաթղթերը հանձնում են հաշվետարին հաշվետվություն կազմելու համար:

8. Հաշվետարը տանում է դրամարկղի գիրքը և բոլոր յելք ու մուտքի գրանցումները, աշխատանքների գրքերը, տախտակները, ցուցակները, որագիրը (տնտեսության ամեն մեկ ճյուղի զեկավարի տված տեղեկանքների հիման վրա) այն ձեերով, վոր մշակել է Խորհրդը և հաստատել Ընդհանուր Ժողովը:

Մթերքների և նյութերի հաշվառման համար հաշվետարը տանում և հատուկ գիրք, վորտեղ ամեն մի մթերքի և նյութի համար բաց և անում առանձին հաշվի:

9. Հաշվետարը պահում է նույնպես և ինվենտարի հաշվառումը: Հաշվետարն իրավունք չունի ինվենտարի գրքի մեջ վորեւ փոփոխություն մտցնել. դրա համար հարկավոր է ունենալ փաստաթուղթ, այսինքն Ընդհանուր Ժողովի կամ Խորհրդի վորոշումը, կամ այն ակտերը, վոր կազմել են վորեւ ինվենտարի ընդունելու կամ պակասելու մասին: Ամբողջ գույքի ցուցակագրությունը կատարվում է տնտեսական տարվա կամ վերջին կամ սկզբին: Վորեւ վիշացած կամ տնտեսությունից դուրս ընկած գույք ցուցակից հանելու համար պահանջվում է Խորհրդի վորոշումը. այդ վորո-

շումը պետք է հաստատած լինի Ընդհանուր ժողովը  
Վերսուլգիչ Հանձնաժողովի յեզրակացության հիման  
վրա :

10. Պահեստապետի, վորն նշանակում է Արտելի  
Խորհուրդը, պարտականությունն ե՝ ընդունել, պահել  
և բաց թողնել մթերքներ, գյուղատնտեսական խնդեն-  
տար, տնտեսական առարկաներ և նյութեր : Պահեստա-  
պետը բաց և թողնում պաշար և նյութեր նախագահի  
կամ Խորհրդի այլ անդամի գրավոր կարգադրությամբ  
և ամենայն ճշտապահությամբ հայտնում ե հաջփետա-  
րին բաց թողած իրերի մասին : Պահեստ մտնող ապ-  
րանքների մուծումը գրքում կատարվում է համապա-  
տասխան փաստաթղթերով (որինակ, գնված ապրանք-  
ների հաշվը) կամ ակտերով, հաստապահ Արտելի  
Խորհրդի կամ քարտուղարի կողմից :

11. Նյութերի, մթերքների և տնտեսական առար-  
կաների առ ու ծախսը կատարվում է ամեն անդամ  
Արտելի Խորհրդի վորոշմամբ :

Արտելի Խորհրդի նախագահին իրավունք է տրվում  
առանց Խորհրդի գիտության կատարել առուծախ-  
այն գումարի սահմաններում, վորը վորոշել է Արտելի  
Խորհուրդը կամ Ընդհանուր ժողովը :

12. Տնտեսության մթերքները վաճառելիս, դրամ  
ստանալիս, մուրհակներ տալիս այն անդամները,  
վորոնք կատարում են այդ գործառնությունները,  
պետք ե վերապարձին հայտնեն Արտելի Խորհրդին  
կատարած գործարքների մասին և անմիջապես ներ-  
կայացնեն հաջփետարին բոլոր անհրաժեշտ փաստա-  
թղթերն ու տեղեկանքները ստացված գումարների  
մասին գրքերի մեջ անցկացնելու համար, համաձայն  
կանոնադրության 40-րդ հոդվածի :

13. Արտելի միջոցները վատնող և յուրացնող ան-  
դամները պատասխանատվության են կանչվում :

II. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Արտելի տնտեսությունն իր ամբողջությամբ և  
առանձին ճյուղերով (գաշտավարություն, անասնա-  
պահություն, բանջարաբուծություն, այգեգործու-  
թյուն և այլն) վարում են, անշեղ կատարելով տնտե-  
սա-արտագրական պլանի պահանջները . իսկ այդ պլա-  
նը կազմում են գավառակային կամ գավառի գյուղա-  
տնտեսի անմիջական զեկավարությամբ այնպես, վոր  
առանձին ճյուղերի միջև լինի լիակատար կազ և ամեն  
մի ճյուղ առանձին վերցրած լինի արդյունավետ :

Ծանոթ .—Տնտեսության առանձին ճյուղերի  
համար զեկավար նշանակում կամ հրավիրում  
են, նկատի առնելով տնտեսության ծավալը և  
և նրանում տարգող ճյուղերը :

15. Այն անձը, վոր զեկավարում է գաշտավարու-  
թյունը, պետք ե հետեւ, վորպեսզի զաշտային աշխա-  
տանքներն իր ժամանակին կատարվեն, չնչավոր ու  
անշունչ ինվենտարը, բանվորական ուժերը կազմ ու  
պատրաստ անցնին աշխատանքի, սերմերն իր ժամա-  
նակին պատրաստ լինին և այլն :

16. Այն անձը, վոր զեկավարում է անասնապա-  
հությունը, ուշիուցով հետեւում և, վորպեսզի տնտ-  
եսուների ընդհանուր խնամքը, կերակրելը, արածաց-  
նելը և կերի մթերքների հավաքումն իր ժամանակին  
կատարվին: Մշտական աշխատանքների համար գո-  
մում, հորթանոցում, խոզանոցում, վոչխարանոցում  
նշանակում են առանձին մարդիկ յերկար ժամանակով:  
Կթվող կովերը բաժանվում են հասուկ կթողների մի-  
ջև, վորոնք պարտավոր են կթելու կանոնները ճշու-  
թյամբ պահել:

Անասունների ծնելու և նման գեղքում անաս-  
նապահության մասում աշխատողները տանում են  
համապատասխան հերթապահություն :

17. Այն անձը, վոր բանող անասունների մասի զե-  
կալարն են, անձամբ հետևում են, վորպեսզի իր ժամա-  
նակին և կանոնավոր ինսամք տանեն բանող անասուն-  
ների վրա (ժամանակին ջրեն, կերակրեն, մաքրեն և  
այլն), նույնպես և հսկում են իր դրամագրության տակ  
դրված ինքնատարին և լծի սարք ու սուրքին :

18. Այն անձը, վոր զեկավարում են արդյունարե-  
րական և ոժանդակ ձեռնարկությունները, հսկում են  
աշխատանքների ընթացքին, ինվենտարի և սարքավոր-  
ման պահպանությանը, իր ժամանակին միջոցներ և  
ձեռք առնում վերանորոգելու այդ բոլորը և առասա-  
րակ պատասխանատու յեւ աշխատանքների նորմալ ըն-  
թացքին այդ ձեռնարկություններում :

19. Շնչավոր և անշունչ ինվենտարի հատկացնելն  
այս կամ այն աշխատանքին կատարվում են Արտելի  
Խորհրդի զիտությամբ և նշանակումով, իսկ առանձին  
ճյուղերում տվյալ ճյուղի զեկավարի զիտությամբ,  
վորի հաշվին և զրվում և վորից պահանջվում են իրեն  
հանձնած ինվենտարը :

20. Այն անձը, վոր զեկավարում են տնտեսության  
այս կամ այն ճյուղը, ամեն որ այդ ճյուղի վերա-  
բերյալ տեղեկություններ են տալիս (մուտք և յելք)  
հաշվետարին Արտելի հաշվապահության մեջ ընդուն-  
ված հատուկ ձեռողիք :

21. Առանձին ճյուղերի զեկավարները մյուս ան-  
դամների հետ հավասար պետք են աշխատանք կատա-  
րեն, որինակ ցույց տալով, թե ինչպես պետք են ող-  
տագործել աշխատանքի ժամերը :

III. ԱՐՏԵԼԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՅԵՎ  
ՈԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԳԻ

Գույքի աղբյուրները

22. Արտելի գույքը կարող է լինել յերկու տեսակ—  
հանրացած և վոչ հանրացած :

ա) Հանրացած գույքը, համաձայն Արտելի կա-  
նոնագրության 13-րդ և 21-րդ հոդվածների, կազմում  
են՝ 1) այն գույքերը, վոր տալիս են Արտելին նրա  
անդամներն ընդմիջությունությունների համար, ինչպես  
հավասարեցնեցին փայ. 2) Արտելի ընդհանուր միջոց-  
ներով ձեռք բերված գույքերը և 3) այն գույքերը,  
վոր տալիս են Արտելին պետական, կոռոպերատորի և  
այլ կազմակերպությունները, վորպես անժամկետ և  
անտոկոս փոխառվություն :

բ) Վոչ հանրացած գույքն են կազմութ այն  
գույքերը, վոր տալիս են Արտելին անդամները, հա-  
մաձայն Արտելի կանոնագրության 14-րդ հոդվածի,  
վորպես գույքային ավանդ ժամանակավորապես ող-  
տագործելու՝ համար :

Գույքի ոգտագործման պայմանները

23. Այն գույքը, չնչավոր ու անշունչ ինվենտար  
և այլն, վոր տալիս են Արտելին անդամներն ի հաշիվ  
փայի՝ համաձայն կանոնագրության 13-րդ հոդվածի,  
ոգտագործելիս Արտելը վոչինչ չի վճարում դրանց  
տերերին վորպես փարզ :

24. Այն գույքը, վոր տալիս են անդամներն Ար-  
տելին վորպես ավանդ, Արտելն ոգտագործում է հա-  
տուկ վարձատրությամբ, վճարելով տնտեսության  
ընդհանուր յեկամներից. Վարձատրության այդ պայ-  
մանները վորոշվում են առանձին պայմանագրով, վոր  
Արտելի Խորհուրդը կնքում և առանձին անդամների

Հետ և հաստատում ե Ընդհանուր Ժողովը: Բայցի դրանից Արտելը կարող է այդ գույքն ընդունել իր անդամներից վարձակալության պայմաններով՝ կամ կարճ ժամանակով աշխատանքի վրոշ սեղոններին, կամ յերկար ժամանակով, քանի նրա տերն անդամ է Արտելը: Վարձակալության պայմանները հաստատում ե Ընդհանուր Ժողովը:

Ծանոթ ։—Եյն գույքերի ոգտագործման համար, վոր տալիս են անդամներն Արտելին վորպես ավանդ, վճարվում է նրանց արժեքի համեմատ վորոշ տոկոս: բայց այդ տոկոսը չի կարող լինել ավելի այն տոկոսից, վոր Պետրանկերը վճարում են իրենց ավանդների համար:

25. Իր անդամներից վարձակալության պայմանով վերցրած գույքն Արտելն ոգտագործում ե պայմանագրով վորոշված ամբողջ ժամանակամիջոցում: գույքի վերանորոգությունն Արտելը կատարում է իր հաշվին:

Արտելի այն անդամները, վորոնք իր ժամանակին չեն հանձնում գույքը Արտելին, համարվում են պայմանագիրը խախտողներ և պարտավոր են դրանից առաջացած վնասները հասուցանել պայմանագրում վորոշված չափերով:

26. Արտելի այն անդամները, վորոնք իրենց գույքը չեն հանձնում Արտելին այս կամ այն պայմանով ոգտագործելու, իրավունք չունեն և միմյանց վարձով առալու: դա նրա համար և, վորպեսզի անձնական հաշվին առաջ չդան անդամների միջև և անդամները նյութական կախման մեջ չենեն մեկը մյուսից:

Գույքի պահպանման կարգը

27. Արտելի հանրացած և վարձով կամ այլ պայմաններով վերցրած գույքն Արտելի Խորհուրդն իր

հայեցողությամբ հանձնում է Արտելի անդամներից այն անձին, վորը ղեկավարում է գույքի պահպանության ու վորձածության աշխատանքը, կամ տնտեսության առանձին ճյուղերի ղեկավարներին:

28. Իր գույքը պահպանելու համար Արտելը չենում և սարքավորում ե կամ վարձով և վերցնում համապատասխան չենք:

29. Այն անձը, վորին հանձնված է գույքի պահպանությունը, պարտավոր է հետեւ, վորպեսզի գույքն ամբողջ և պատրաստ լինի գործածության համար, և ինվենտարի վերանորոգության անհրաժեշտության մասին հայտնել Խորհրդին:

VI. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

30. Աշխատանքի պլանը և նախնական բաժանումն անդամների միջև քննում և հաստատում ե Ընդհանուր Ժողովը:

31. Անդամներին աշխատանքի և ուղարկում Արտելի Խորհրդի նախագահը կամ նրա տեղակալը կամ թե հատկապես այդ բանի համար նշանակված անձը (Արտելը կարող է նաև տնտեսության վարչի ունենալ, վորն աշխատում է Խորհրդի ցուցմունքներով):

32. Նախագահը բանվորական ուժերը պահանջած ժամանակին տեղափոխում և տնտեսության մեջ ճյուղերի մյուսը և պլանի հիման վրա կազմում և աշխատանքի ամենորյա կարգը:

33. Աշխատանքի բաժանումն անդամների միջև կատարվում և նախընթաց յերեկոյան, աշխատանքն անդամները կատարում են որավարձ, հատափարձ (գործադրակարձ) պայմանով կամ վորոշ ժամկետով, նայած թե վոր աշխատանքի համար ինչ կարգ և բնունքած Արտելի մեջ:

Մանոք .—Հաստավարձով (գործավարձով) են կատարվում այն բոլոր աշխատանքները, վորոնց տեղությունը դժվար է հաչվել:

34. Աշխատանքն անդամների միջև բաժանվում ե ամենանպատակահարմար ձեռվ: Բանող անասունն կամ լծկան չունեցող անդամները կատարում են լծկան չըպահանջող աշխատանք: Յեթև Արտելն ունի հանրացած լծկան, դրանք աշխատում են Արտելի լծկաներով:

35. Խորհրդի նախագահը կամ աշխատանքների ղեկավարն իրավունք ունի փոխել աշխատանքի կարգը, յեթև պահանջում են որվա յեղանակը կամ աշխատանքի այլ պայմանները:

36. Տնտեսության այն ճյուղերում, վորոնք պահանջում են մշտական հոկողություն (անասնապահություն, բանջարաբուծություն, այգեգործություն և այլն) նշանակվում են Արտելի անդամներից մշտական աշխատագրուներ:

37. Արտելի անդամներն՝ աշխատանքի կարգը գործելիս՝ առանց առարկության յենթարկվում են Խորհրդի նախագահն կամ տնտեսության ղեկավարին:

38. Բոլոր անդամները, ստանալով աշխատանքի պատվերը, իրենց աշխատանքին են անցնում իր ժամանակին:

39. Արտելի Խորհուրդն իրավունք ունի աշխատանքի չգնացողներին փոխարինել այլ անդամներով կամ վարձել դրսից ուժեր:

40. Աշխատանքների ակնհայտ անբարեխիղճ կատարելը, առանց հարգելի պատճառների աշխատանքի չգնալ, և առհասարակ սառն և անտարեր վերաբերմունքը ղեկի աշխատանքը տուգանվում է առան-

ձին կանոններով, վոր մշտական և Արտելի Խորհուրդը և հաստատել է Ծնդհանուր ժողովը:

41. Խորհրդի անդամներից վոչ վոք, բայց չ չի ազատվում տնտեսության մեջ անձամբ Փիզիքական աշխատանք կատարելուց:

42. Պատանիները մասնակցում են Արտելի աշխատանքներին այն ղեպքերում, յերբ առանց նրանց աշխատանքներն առաջ չեն գնում: Պատանիների աշխատանքը կատարվում է փորձված ղեկավարների հոկողության տակ այն հաշվով, վոր աշխատանքը նրանց ծանոթացնե տնտեսության կազմակերպման հետ, տանրանց մասնագիտական փորձառություն և այլն:

#### ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

43. Հղի կանայք ազատվում են աշխատանքից համաձայն աշխատանքի գործող որենքների:

44. Հիվանդության պատճառով աշխատանքից ազատված անդամների համար ամեն մեկ որ համարվում է աշխատանքի կես որ:

45. Բոլոր հիվանդ անդամները բժշկվում են ըստ հնարավորության Արտելի հաշվով:

Մանոք .—Արտելի Խորհուրդը միջոցներ և ձեռք առնում ապահովելու Արտելի բնակիչների համար բժշկական ողնությունը և թույլ շտալու, վոր տարածվեն վարակիչ հիվանդություններ և այլն. դրա համար պայմանավորվում է մոտակա բուժկայանի հետ:

#### Վ. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՍՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐՉԱՍՐՈՒԹՅՈՒՆԸ

#### Աշխատանքի հաշվառումը

46. Արտելում պարտադիր կերպով պահվում է բոլոր աշխատավորների աշխատանքի հաշվառումը. լի-

նի այդ ոչխատանքը որավարձ, հատավարձ (գործավարձ), թե ժամկետային:

47. Աշխատանքների հաշվառման համար տնտեսության զեկավարն և առանձին ճյուղերի վարչներն ամեն որ կազմում են տեղեկագիր կամ տախտակ Արտելի անդամների կատարած աշխատանքների մասին:

48. Աշխատանքի տախտակը պարունակում ե հետեւյալ տեղեկությունները՝ ա) ով ե կատարել աշխատանքը, բ) վորքան որ կամ ժամ ե գնացել այդ աշխատանքի վրա, գ) ինչ ինվենտար ե գործածվել այդ աշխատանքի մեջ, դ) ինչ աշխատանք ե կատարվել (վար, խոտի հունձ, քաղհան և այլն):

Տախտակը կազմողի ստորագրությամբ տրվում է Հաշվետարին՝ հաշվետվություն կազմելու համար:

49. Աշխատած որերն ու ժամերը գրվում են ամեն մի անդամի հաշվեկրբույկում ամփար մեկ անդամ:

50. Աշխատանքի ամսական տեղեկագիրը (տախտակը) Արտելի Խորհուրդը կազմում, ստորագրում և հետեւյալ ամսվա սկզբին կախում ե վորոշ տեղում կամ հայտարարում ե անդամների Ընդհանուր Ժողովին: Յեթե յերեք որևա ընթացքում անդամները չեն բողոքում, տեղեկագիրը համարվում ճիշտ կազմված:

Աշխատանքի վարձատրության կարգը

51. Ամեն մեկ առաջիկա տարվա համար Արտելի Խորհուրդն Ընդհանուր Ժողովի հաստատմամբ վորոշում ե բոլոր տեսակ—օրավարձ, հատավարձ (գործավարձ) և ժամկետային աշխատանքի գնահատումը: Աշխատանքի վարձատրությունը տնտեսական տարվա վերջին կարող ե ցածրանալ, յեթե տարեկան աշխատանքի արդյունքը չի համենի վորոշած գնահատմանը:

52. Անդամների աշխատանքը վարձատրելու համար բոլոր աշխատավորներն Արտելում բաժանվում են կատեղորիանների ըստ տարիքի: Եթեև որինակ բերենք հետեւյալ խմբերը.

1 խումբ տղամարդ և կին 18-ից մինչև 55 տարեկան  
2 » » » 56 և ավելի բարձր  
3 » » » 15—17 տարեկան  
4 » » » 12—14 »

Ամեն մեկ աշխատած որ հաշվում ե

1 ին խմբի համար մեկ լրիվ որ  
2-րդ » »  $\frac{3}{4}$  »  
3-րդ » »  $\frac{2}{3}$  »  
4-րդ » »  $\frac{1}{2}$  »

53. Արտելի առանձնապես գնահատելի և անփոխարինների անդամ աշխատավորներին խրախուսելու համար վորոշվում ե ավելի բարձրավարձատրություն նըրանց վորակյալ և ջանասեր աշխատանքի համար, բայց նորմալ վարձատրության 50 տոկոսից վոչ ավելի:

Ծանոթ 41 Աշխատանքի վարձատրության բարձրացումը վորակյալ աշխատանքի համար կատարում է Խորհուրդը, հետազայում հաստատում և Ընդհանուր Ժողովը:

54. Արտելի այն անդամները, վորոնք տնտեսության դանազան ճյուղերում մշտական աշխատանք են կատարում, բացի նորմալ վարձից, ստանում են նաև պարզեվատրություն իրենց ճյուղի բարելավման համար, որինակ ընտիր սիրմեր ձեռք բերելու, անառողների, այգիների արդյունավետությունը բարձրացնելու համար և այլն:

55. Վարձով հրավիրված մասնագետները (գյուղատնես, հաշվառական և այլն) ստանում են աշխատա-

վարձ Արտելի Խորհրդի հետ կապած համաձայնությամբ՝ աշխատանքի, որենքի հիման վրա :

56. Աշխատանքի վերջնական հաշվն և արդյունքի բաշխումն անդամների միջն կատարվում և տարեկան հաշվետվությունը կազմելուց և Ընդհանուր Ժողովի կողմից հաստատվելուց հետո :

57. Անդամների աշխատանքը վարձատրում են ինչպես կանխիկ գրամով, նույնպես և մթերքներով տեղային շուկայի միջին գներով :

58. Արտելի ամեն մեկ անդամին կարող են տալ կանխաճար գրամով և մթերքներով, նայելով ավյալ տարվա սպասելիք բերքին և ամեն մեկ անդամի կատարած աշխատանքին, համաձայն Արտելի կանոնադրության 36-37 Հոդվածների :

Բոլոր տրված կանխաճարները հաշվի յեն առնում անդամների հետ վերջնական հաշվը փակելիս :

## VI. ԲԵՐՔԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

59. Բոլոր արտադրանքները, վոր ստացվում են ինչպես գյուղանտեսությունից, նույնպես և արդյունաբերական և ոժանդակ ձեռնարկություններից, ճիշտ հաշվում են և գրում Արտելին մուտք՝ շուկայի այն գներով, վոր լինում են բերքի իրացման մոմենտին :

60. Բերքի բոլոր մթերքները, վոր ստիճանաբար հավաքվում են դաշտից, այգուց, բանջարանոցից և այլն, անմիջապես գրվում են Արտելին մուտք :

61. Արտադրանքի գործածության, ուրիշին հանձնելու կամ ծախելու ամեն մեկ գեղք ցուցակադրվում և անմիջապես :

62. Արտելի անդամներին թե արտադրանքով և թե կանխիկ գրամով տրված ամեն մեկ կանխաճար գր-

վում և անդամի անձնական հաշվում և հաշվեգրքույթյուն :

63. Յեթե Արտելն ունի շտեմարան, պահեստներ կամ մառան ընդհանուր տնտեսության արտադրանքները պահելու համար, ապա այդ արտադրանքները տրվում են պահեստավետին նրա ստորագրությամբ և պահպանություն :

## VII. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԵԼԸ

64. Տնտեսական տարվա վերջին հաշվետարը կամ Խորհուրդը կազմում են տարեկան հաշվետվություն, վորը լսում և հաստատում է Ընդհանուր Ժողովը, համաձայն կանոնադրության 41-րդ Հոդվածի :

65. Տարեկան հաշվետվության մեջ, վոր ներկայացնում և Խորհուրդն Ընդհանուր Ժողովի հաստատությանը, պետք են շահակվի :

Մուտքի մասնաւմ. ստացված մթերքների և արտադրանքների քանակը 1. գյուղավարությունից, 2. խոտարքներից, 3. արոտավայրերից, 4. կաթնատընտեսությունից, 5. խոզարուծությունից, 6. անտառաբուծությունից, 7. այգեգործությունից և բանջարաբուծությունից, 8. ոժանդակ և արդյունաբերական ձեռնարկություններից, և ուրիշ յեկամունքներ ու մուծումներ Արտելի անտեսության մեջ:

Յելքի մասնաւմ. 1. գյուղատնտեսական հարկը և այլ տուրքեր ու պարհակներ. 2. ցանքի համար բաց թողած սերմերի քանակն ու պարարտանյութերը. 3. անասուններին բաց թողած կերը. 4. Անդամներին և այլ աշխատակիցներին տրված աշխատավարձը և առհասարակ տնտեսության մեջ նրանց ունեցած մասը, համաձայն կանոնադրության 34 և 35-րդ Հոդվածների. 5. փոխառությունների և պարտքերի համար վճարված

տոկոսները . 6 . Գյուղատնտեսական գործիքների , մեքե-  
նաների , բանող և արդյունաբեր անասունների ամոր-  
տիզացիան . 7 . ինվենտարի վերանորոգության ծախ-  
քերը , 8 . շենքերի վերաբերյալ ծախքերը (ամորտի-  
զացիա , վերանորոգություն) . 9 . ոժանդակ և արդյու-  
նաբերական ձեռնարկությունների տեխնիկական սար-  
քավորման ծախքերը . 10 . ապահովագրական (2—3  
տոկոս) և այլ՝ տնտեսության վերաբերյալ՝ ընդհա-  
նուր ծախքեր :

66 . Հաշվետվության մեջ ցույց է տրվում նաև ,  
թե հաշվետու տարվա ընթացքում վորքան որ են աշ-  
խատել անդամները , վորքան կանխավճար են ստացել  
և այն :

### VIII. ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳՆ ԱՐՑԵԼՈՒՄ

67 . Տնտեսական տարվա վերջին Արտելը , համա-  
ձայն տարեկան հաշվետվության , կատարում է ընդհա-  
նուր յեկամտների վերջնական բաշխումը :

68 . Արտելի աշխատանքի ընդունակ ամեն մեկ ան-  
դամ , համաձայն տնտեսության մեջ կատարած իր աշ-  
խատանքի , ընդհանուր յեկամտից ստանում և իրեն հա-  
սանելիք բաժինը , համաձայն կանոնադրության 36—37  
հոդվածների :

69 . Յեկամտի այն մասը , վոր մնում է տնտեսու-  
թյան վերաբերյալ բոլոր ծախքերը և անդամներին արը-  
ված վարձատրությունը դուրս դաշտում հետո , կազմում  
է Արտելի զուտ յեկամուտը :

70 . Զուտ յեկամափց , համաձայն կանոնադրության  
38-րդ հոդվածի , հատկացումներ են անում հիմնական  
(դրա մեջ և անբաժանելի) , պահեստի և հատուկ դրա-  
մագլուխներին :

ՎԵՐՋ

ՀՀ Ազգային գրադարան



NL0208700

30. 450

ԳԻՆՅ 10 ԿՈՊ.